ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Երիտասարդների կողմից սոցիալական ձեռնարկատիրության և կարիերայի կառավարման գործնական հմտությունների խթանում Ուկրաինայում, Մոլդովայում, Վրաստանում և Հայաստանում՝ Նորարարական աշակերտական սոցիալական

Իրականացման ժամանակահատված: 01.07.2023 - 30.06.2025

ԱԼԳ երկրներ:

Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 902 788

Ընդհանուր բյուջե: € 1 004 660

Իրականացնող կազմակերպություն(ներ):

ChildFund Deutschland (coordinator), CODE-SE HUB (ARM), Education Development and Employment Centre (GEO), EcoVisio & Vesta (MLD), School of ME (UKR)

Նախագծի նկարագրություն:

Ծրագրի նպատակն է խթանել երիտասարդների սոցիալական ձեռնարկատիրությունը և զարգացնել երիտասարդների կարիերայի կառավարման և թվային հմտություններն ու կարողությունները, որոնք անհրաժեշտ են կանաչ անցման համար Ուկրաինայում, Մոլդովայում, Վրաստանում և Հայաստանում՝ աշակերտական սոցիալական ձեռնարկությունների (ԱՍՁ) նորարարական կրթական հայեցակարգի միջոցով՝ քաղաքացիական հասարակության դերակատարների, տեղական իշխանությունների և տարբեր ձեռնարկատերերի ներգրավմամբ.

Ֆոկուս խմբային քննարկումների և վերապատրաստման ծրագրերի միջոցով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և երիտասարդական կենտրոնների ներկայացուցիչները հնարավորություն կունենան դառնալու արհեստավարժ մենթորներ և կմասնակցեն կրթական մոդուլի, ուսումնական նյութերի մշակմանը և ԱՍՁ-ի համար առցանց պորտալի ստեղծմանը.

ԱՍՁ կրթությունը կփորձարկվի դպրոցներում՝ 24 ԱՍՁ-ների ֆինանսավորման և ինտենսիվ մենթորության միջոցով: Սոցիալական ձեռնարկատիրության հասկանալու համար երիտասարդները հնարավորություն կունենան ուսումնասիրելու ԱՍՁ վերաբերյալ լավագույն փորձը: Այս գործողությունները նպատակ ունեն գաղափարը տարածել ազգային մակարդակներում իրազեկման, լոբբինգի աշխատանքների միջոցով, որի

Ակնկալվող արդյունքներ:

Աշակերտների կողմից առաջնորդվող 24 աշակերտական սոցիալական ձեռնարկությունների հիմնում, իրականացում և մենթորություն՝ համաձայն այս կրթական մոդուլի մոտեցման.

3 երկրներին հատուկ մեթոդաբանական ուղեցույցների մշակում, որը հիմնված է մշակված առաջարկությունների և կրթական ուսումնական նյութերի վրա՝ շահագրգիռ կողմերին իրազեկելու և ԱՍՁ մոդուլը հաջորդական քայլերով կիրառելու նպատակով.

Սոցիալական ձեռնարկատիրության համակարգին աջակցելու տարածաշրջանային փորձագետների / մենթորների / քոուչների կարողությունների զարգացման համար ՔՀԿ-ների, երիտասարդական կենտրոնների և դպրոցների ավելի քան 170 ներկայացուցիչներ կմասնակցեն դասընթացավարների վերապատրաստման ծրագրին: ՔՀԿ-ների և շահագրգիռ կողմերի միջև աջակցային փոխհարաբերությունները հզորացնելու համար, փորձագետների և շահագրգիռ կողմերի հետ կիրականացվի երկու ճանաչողական այց Ուկրաինա և Գերմանիա, կկայանա 1-օրյա համաժողով՝ աշակերտական ընկերությանը ԱՍՁ մրցանակ շնորհելու համար.

Աջակցել ուկրաինացի երիտասարդներին և հակամարտությունից տուժած երիտասարդներին՝ առաջարկելով